ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

22 մայիսի 2026թ. **N 205-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԵՎԱՆՅԱՆԻՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Հ. Հովհաննիսյանի կողմից 22.05.2026թ. թիվ 26/300գ-26 գրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել միջնորդություն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Անդրանիկ Նորիկի Թևանյանին ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 3-ին կայացրել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցելու համար «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակը գրանցելու մասին» թիվ 66-Ա որոշումը, որով գրանցել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի 2-րդ հերթական համարի պատգամավորի թեկնածու է գրանցվել Անդրանիկ Նորիկի Թևանյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վերը նշված գրությամբ ներկայացված միջնորդությունը հիմնավորող փաստաթղթերը պարունակում են պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բավարարեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վ. Հովակիմյանի միջնորդությունը՝ նիստը դռնփակ անցկացնելու վերաբերյալ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին մասնակցել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված

հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Վահան Սարգսյանը և նույն վարչության դատախազ Եսայի Աբովյանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին մասնակցել են նաև «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի պատգամավորի թեկնածու Անդրանիկ Թևանյանի շահերը ներկայացնող փաստաբաններ Արամ Օրբելյանը, Արթուր Հովհաննիսյանը և Սերգեյ Մարաբյանը: Փաստաբան Արամ Օրբելյանի կողմից ներկայացվեց Անդրանիկ Թևանյանի դիմումն առ այն, որ իր բնակարանում քննչական գործողություններ իրականացնելով պայմանավորված չի կարողանում ներկայանալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին: Միաժամանակ փաստաբան Արամ Օրբելյանի կողմից ներկայացվեց միջնորդություն՝ տրամադրել ժամանակ՝ վարչական վարույթի նյութերին ծանոթանալու համար:

Միջնորդությունը բավարարվեց, նիստն ընդմիջվեց, տրվեց ժամանակ՝ նյութերին ծանոթանալու համար, ինչպես նաև պատգամավորի թեկնածու Անդրանիկ Թևանյանի ներկայությունն ապահովելու համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին ներկայացավ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի պատգամավորի թեկնածու Անդրանիկ Թևանյանը:

Անդրանիկ Թևանյանի և նրա շահերը ներկայացնող փաստաբանների կողմից ստորագրվեց Արձանագրություն՝ Պետական գաղտնիք կազմող տեղեկություններ չհրապարակելու մասին ստորագրություն ստանալու և պետական գաղտնիք կազմող տեղեկություններ հրապարակելու համար սահմանված պատասխանատվության մասին նախազգուշացնելու մասին:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Ընտրական օրենսգիրք) 90-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«Պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության՝ նա չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Սույն մասով սահմանված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձերբակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձերբակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նշված անձանց կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա»:

Քննարկելով ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Միջնորդությունը բավարարել՝ տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Անդրանիկ Նորիկի Թևանյանին ազատությունից զրկելու վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի մայիսի 22
ք. Երևան